# ԷՄԲՐԻՈՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԿՅԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

**Մանուկ Մուրադյան**
*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի կյանքի իրավունքը, որը, լինելով անհատի սահմանադրական կարգավիճակի կենսական հիմքը[1], սկզբունքորեն փոխկապակցված է այլ հիմնական իրավունքների և ազատությունների հետ: Այդ իրավունքն ունենալու համար մարդը չպետք է ինչ-որ բան անի, մարդը կարիք չունի այն ձեռք բերելու: Յուրաքանչյուրը, անկախ ազգությունից, կրոնական հայացքներից, առողջական վիճակից, իրավական դիրքից և այլ հանգամանքներից, ունի այդ իրավունքը մարդ լինելու ուժով: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը մարդուն է ճանաչում բարձրագույն արժեք, այնուհետև ընդգծում մարդկային անհատականությանը բնութագրական անօտարելի արժանապատվության՝ իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքը լինելու հանգամանքը: Սահմանադրական նորմերի համակարգային վերլուծությամբ կարելի է եզրակացնել, որ առկա է հստակ ընդգծված տրամաբանական կապ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության և 24-րդ հոդվածում երաշխավորված յուրաքանչյուրի կյանքի իրավունքի միջև:

Այն, որ կյանքի հիմնական իրավունքի կրողը մարդն է, իսկ հասցեատերը (պարտավոր կողմը)՝ հանրային իշխանությունը, կասկած չի հարուցում: Սակայն ժամանակակից իրավագիտությունում հստակ չէ այն հարցի պատասխանը, թե երբ է սկսվում մարդու կյանքը՝ բեղմնավորումի՞ց անմիջապես հետո, սաղմի զարգացման որոշակի փուլո՞ւմ, թե՞ ծնվելու պահից: Նշված փաստական հանգամանքներն ունեն սկզբունքային նշանակություն սաղմի կամ վերջինիս նախնական վիճակի սահմանադրահիրավական դիրքի որոշակիացման հարցում: Հիմնահարցն արդիական է հատկապես կյանքի հիմնական իրավունքի լույսի ներքո սաղմի իրավական պաշտպանության խնդրի լուսաբանման շրջանակներում:

Բժշկագիտության զարգացման ներկա փուլում, երբ հնարավոր է պարզել երեխայի սեռը, դեռևս չծնված պտղի մեջ հայտնաբերել տարաբնույթ պաթոլոգիաներ, հղիության արհեստական ընդհատման ժամանակակից մեթոդները, ինչպես նաև խնդրի հետ կապված այլ դեպքերը ստիպում են ըստ էության մտածել էմբրիոնի իրավական կարգավիճակի, մասնավորապես՝ կյանքի իրավունքի պաշտպանության հիմնահարցերի վերաբերյալ: Այս համատեքստում, ինչպես արդեն նշվել է, կարևորվում է այն հարցի պատասխանը, թե իրավական տեսանկյունից ե՞րբ է սկսվում մարդու կյանքը:

Ոլորտին վերաբերող իրավաբանական գրականության մեջ մարդու կյանքի մեկնարկի և դրա իրավական պաշտպանության հարցերի վերաբերյալ գոյություն

[1] Տե՛ս **Մուրադյան Մ.Հ.** Մարդու իրավունքների տեսության հիմնահարցեր (մաս 1): Եր., 2016, էջեր 53-54:

ունեն 3 հիմնական մոտեցումներ: Դրանք են բարցարձակ, չափավոր (մասնակի) և լիբերալ[1] մոտեցումները:

Բացարձակ մոտեցման կողմնակիցները մարդու սաղմը դիտում են որպես մարդկային էակ, որն ունի արժեք և կյանքի իրավունք: Նրանք իրենց տեսակետը հիմնավորում են նրանով, որ օրենսդրությամբ արգելվում են այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք կդանդաղեցնի կամ կդադարեցնի սաղմի զարգացումը: էմբրիոլոգիայի ոլորտի մասնագետների մեծամասնությունը գտնում է, որ մարդու կյանքը սկսվում է սաղմնավորման պահից, և անատոմիական փոփոխությունները, որոնք տեղի են ունենում բեղմնավորումից մինչև երեխայի ծնվելը, խիստ բնական են, և այն հիմնավորումները, թե նոր սաղմնավորված բջիջը դեռևս չի խոսում մարդու գոյության մասի, ըստ նրանց, արդարացված չէ, ուստի անհրաժեշտ է նույնացնել «մարդ» և «էմբրիոն» հասկացությունները[2]:

Այսպիսով, այս տեսության համաձայն, պետությունն ունի պտղի ձևավորման և զարգացման ցանկացած փուլում դրա մասին հոգ տանելու և բացարձակ պաշտպանության պարտականություն[3]: Հատկանշական է, որ ՀՀ-ի վրա ևս դրված է էմբրիոնի մասին հոգ տանելու պարտականությունը, սակայն ինչպես երևում է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի՝ «Անվտանգ մայրությունը» վերտառությամբ 6-րդ հոդվածի բովանդակությունից, պետության՝ պտղի առողջության մասին հոգ տանելու պարտականությունն անուղղակիորեն կապվում է կնոջ անվտանգ մայրության իրավունքի հետ: Համաձայն նշված հոդվածի 2-րդ մասի՝ «Կինն ունի անվտանգ մայրության, այն է՝ ***հղիության ընթացքում առողջության պահպանման,*** ծննդաբերության և հետծննդյան ժամանակաշրջանում իր, ***պտղի առողջությանը*** և նորածնին նվազագույն ռիսկ պատճառող մեթոդների կիրառմամբ օգնություն ստանալու իրավունք»: Ճիշտ է, իրավակարգավորումը խոսում է հղիության ընթացքում ***կնոջ*** առողջության, այնուհետև ***ծննդաբերության և հետծննդյան ժամանակաշրջանում պտղի առողջության*** պահպանման **կնոջ իրավունքի** մասին, սակայն պարզ է, որ օրենքի նորմի տրամաբանական մեկնաբանությունը հնարավորություն է տալիս խոսել նաև կնոջ առողջության պահպանման իրավունքի լույսի ներքո պետության կողմից էմբրիոնի գոյությունը կարևորելու, ***այլ ոչ թե կյանքի իրավունքը ճանաչելու մասին***, ինչը սահմանադրական կարգավորման առարկա է: Պետության՝ էմբրիոնի զարգացման մասին հոգ տանելու պարտականությունը երևում է նաև «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում արտահիվանդանոցային պայմաններում ցուցաբերվող մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի՝ 28 նոյեմբերի 2013 թվականի N

---

[1] Տե՛ս **Перевозчикова Е. В., Панкратова Е. А.** Конституционное право на жизнь и правовой статус эмбриона человека// "Медицинское право", 2006, N 2.

[2] Տե՛ս **Карпова И.** Ребенок под вопросом // Нескучный сад. Журнал о православной жизни. 2003. № 3 (7). 5. **Голиченков В.** Эмбрион не может заявить свои права, это можем сделать мы // Православие и мир. 2012. 28 сентября. **О'Коннор Д.** Аборт - это убийство // Америка. 1993. Июнь. N 439. С. 42.

[3] Տե՛ս Report by Working Party on the Protection of the Hyman Embryo and Fetus. Steering committee on bioethics of Council of Europe. Strasbourg, 19 June 2003. http://www. coe. int/ Bioethics. **Welty E** 1963 A handbook of Chrisian social ethics. Nelson, Edinburgh, vol. 2. Основы социальной концепции Русской православной церкви. http://www. orthodox. org. ru/sd12r. **Ковлер А. И.** Антропология права. М., 2002. С. 456.

77-Ն հրամանի առանձին նորմերի համակարգային վերլուծությունից: Սակայն այս պարագայում ևս էմբրիոնի առողջության պահպանման հարցում պետության պարտականությունն իրավաստեղծը կապում է հղիների նախածննդյան խնամքի, այսինքն՝ ապագա մոր առողջության ապահովման հետ:

Հիմնահարցի վերաբերյալ սկզբունքորեն հակառակ տեսակետն են պնդում այսպես կոչված լիբերալ մոտեցման կողմնակիցները: Վերջիններիս կարծիքով՝ էմբրիոնն իրենից ոչ մի արժեք չի ներկայացնում, և հնարավոր չէ ակնկալել պետության իրավական պաշտպանությունը, հետևաբար և չունի կյանքի իրավունք: Իրավաբանական գրականության մեջ հիմնավոր քննադատության է արժանացել քննարկվող տեսության կողմնակիցներից Մ. Տուլիի դիրքորոշումը[1], համաձայն որի օրգանիզմն օժտված է կյանքի իրավունքով, եթե ինքն իրեն գիտակցում է որպես զարգացող սուբյեկտ, ունի կյանքի փորձ և մտավոր այլ ունակություններ: Առնվազն անհասկանալի է, թե հատկապես ինչ ի նկատի ունի հեղինակավոր տեսաբանը, երբ կյանքի իրավունքի գոյությունը կապում է կյանքի փորձի և մտավոր ունակությունների հետ: Ստացվում է, որ նոր ծնված երեխան, որը հղիության վերջին ամիսներին սաղմից տարբերվում է միայն կեցության միջավայրով, ևս չի կարող ունենալ կյանքի իրավունք[2]:

Ինչ վերաբերվում է մարդու կյանքի պաշտպանության սկզբի վերաբերյալ չափավոր (մասնակի) տեսությանը, ապա այն կարելի է դիտարկել որպես փոխզիջումային: Տեսության կողմնակիցները, չհերքելով սաղմի արժեք լինելու փաստը, վերջինիս կյանքի իրավունքը կապում են սաղմի զարգացման որոշակի փուլի հետ՝ շեշտադրում կատարելով երեխայի վաղաժամ ծնվելու պարագայում առանց մոր աջակցության ապրելու հանգամանքի վրա: Նրանց կարծիքով՝ սաղմն ունի որոշակի արժեք, բայց այն բացարձակ չէ[3]: Կյանքի սկիզբը մի դեպքում նրանք կապում են ներվային համակարգի ամբողջական ձևավորման, մեկ այլ դեպքում՝ ցավի զգացողության, մյուս դեպքում՝ ուղղակի պտղի ամբողջական ձևավորման հետ[4]: Մեր կարծիքով, այս տեսության շրջանակներում կարել է խոսել ***ոչ թե կյանքի իրավունքի***, այլև ***էմբրիոնի զարգացման իրավունքի մասին***: Սակայն հիմնախնդրի հետազոտման լույսի ներքո առանձնակի տարբերություն չենք տեսնում կյանքի իրավունքի և կենդանի ծնվելու իրավունքի պաշտանության միջև:

Սաղմի կենսունակության հարցի պարզումը ոչ միայն առանձին պետությունների, այլ նաև միջազգային խնդիր է: Միջազգային չափորոշիչներում ևս հստակ մոտեցում գոյություն չունի: Նախ պետք է փաստել, որ հարցի վերաբերյալ բացակայում է ինքնուրույն փաստաթուղթ: Միջազգային առաձին փաստաթղթեր մակերեսո-

---

[1] Տե՛ս Konventsiya o zashchite prav cheloveka i dostoinstva chelovecheskogo sushchestva v svyazi s ispol'zovaniem dostizheniy biologii i meditsiny: Konventsiya o pravakh cheloveka i biomeditsine. Ov'edo, 1997 g. // Mezhdunarodnye akty o pravakh cheloveka: sbornik dokumentov. M., 2002. c. 302.

[2] Տե՛ս **Шиндяпин С. Э.** К вопросу о моменте признания правоспособности эмбриона человека// Вестник ТГУ, выпуск 12 (140), 2014, с. 2.

[3] Report by Working Party on the Protection of the Hyman Embryo and Fetus. Steering committee on bioethics of Council of Europe. Strasbourg, 19 June 2003. http://www. coe. int/Bioethics.

[4] **Haring B.** 1972 Medical ethics. St. Paul, Slough. **Курило Л.** Развитие эмбриона человека и некоторые морально-этические проблемы методов вспомогательной репродукции. http://www. rusmedserv. com/problreprod/1998/3/article_90.html. **Bayles M. D.** 1984 Reproductive ethics. Prentice - Hall, Englewood Cliffs.

րեն անդրադառնում են էմբրիոնի կարգավիճակին, սակայն ոչ վերջինիս կյանքի իրավունքին: Այսպես՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի նախաբանում նշված է, որ «երեխան, նկատի ունենալով նրա ֆիզիկական և մտավոր անհասունությունը, կարիք ունի հատուկ պաշտպանության և հատուկ հոգատարության, ներառյալ՝ պատշաճ իրավական պաշտպանությունը ծնվելուց առաջ և հետո»: Իրավաբանական գրականության մեջ առկա է այն կարծիքը, որ Կոնվենցիան ուղղված չէ էմբրիոնի կյանքի իրավունքի պաշտպանությանը[1]: Անհասկանալի է հեղինակի նման տեսակետը հատկապես այն պարագայում, երբ Կոնվենցիայի 1-ին հոդվածը սույն փաստաթղթի նպատակների համար ***երեխա է համարում տասնութ տարին չլրացած յուրաքանչյուր անձի***: Ինչպես տեսնում ենք, նորմի փաստակազմի հատկանիշներից բացակայում է ֆիզիկապես ծնված լինելու փաստի վերաբերյալ որևէ նշում: Հիմնահարցի մասին առավել հստակ է Մարդու իրավունքների ամերիկյան Կոնվենցիան (հդ. 4, մաս 1), որտեղ կյանքի իրավունքը հարգելու պահանջի իրավունքի համատեքստում նշվում է, որ այն սկսվում է սաղմնավորման պահից, և ոչ ոք չի կարող կամայական զրկվել կյանքից[2]: Կոնվենցիոն այս չափորոշիչն իր ամրագրումն է ստացել նաև առանձին պետությունների օրենսդրության մեջ[3]:

Էմբրիոնի իրավական պաշտպանության առանձին հարցերի իր իրավական դիրքորոշումներում անդրադարձել է նաև ՄԻԵԴ-ը: Այսպես՝ Թայրերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործի շրջանակներում Դատարանը նշում է, որ կյանքի մեկնարկի պահի որոշակիացումը գտնվում է պետության օրինաստեղծ հայեցողության տիրույթում: Նման դիրքորոշումը Դատարանը հիմնավորում էր այն փաստով, որ եվրոպական պետությունների մեծ մասում բացակայում են էմբրիոնի իրավական դիրքի պաշտպանության անհրաժեշտ կառուցակարգերը, և պետությունների միջև չկա հարցի վերաբերյալ գիտական և իրավական միասնական մոտեցում[4]: Համարժեք դիրքորոշում է Դատարանը հայտնել նաև Վոն ընդդեմ Ֆրանսիայի գործի շրջանակներում՝ թողնելով հարցի կարգավորումը Բարձր պայմանավորվող կողմերի հայեցողությանը[5]: Բոսոն ընդդեմ Իտալիայի գործի շրջանակներում Դատարանը նշել է, որ ճանաչելով սաղմի այն իրավունքները, որոնք անհրաժեշտ է ճանաչել անձանց համար, կառաջացնի իրավունքների ոչ հիմնավոր սահմանափակում արդեն ծնված մարդկանց վերաբերությամբ[6]: Ավելին, բոլորովին վերջերս մեկ այլ՝ Կոստան և Պավանն ընդդեմ Իտալիայի գործի շրջանակներում Դատարանը հաստատեց մինչ այդ հնչեցրած այն իրավական դիրքորոշումը, որ անհրաժեշտ է տարբերել «երեխա» և «էմբրիոն» հասակացությունները[7]: Իքսը ընդդեմ Միացյալ Թագավորության գործի շրջանակներում Դատարանը նշեց, որ Կոնվենցիայում հաճախակի օգտագործվող «յուրաքանչյուր» բառի տակ չպետք է հասկանալ մինչև

---

[1] Տե՛ս **Гландин С.В.** О статусе эмбриона человека в свете права на уважение личной и семейной жизни в европейском и российском праве. http://lexandbusiness.ru/view-article.php?id=3743 . 13.10. 2016.

[2] Տե՛ս http://hrlibrary.umn.edu/russian/instree/Rzoas3con.html (18.10.2016).

[3] Տե՛ս **Свитнев К. Н.** Статус эмбриона: правовые и морально-этические аспекты. Правовые вопросы в здравоохранении. http://www.jurconsult.ru/publications/embrio_ status.pdf. Օրինակ, ԱՄՆ-ում երեխաների առողջության ապահովագրության պետական ծրագրի շրջանակներում օգտագործվող «երեխա» հասկացության մեջ ներառվում են մինչև 19 տարեկան անհատները՝ ներառյալ սաղմնավորման պահից մինչև ծնունդը:

[4] European Court of Human Rights. Tyrer v. United Kingdom. Application N 5856/72. European Court of Human Rights. Brüggemann and Scheuten v. Germany. Application N 6959/75.

[5] European Court of Human Rights. Vo v. France. Application N 53924/00.

[6] European Court of Human Rights. Boso v. Italy. Application N 50490/99.

[7] European Court of Human Rights. Costa and Pavan v. Italy. Application N 54270/10.

ծնվելը, սակայն կատարեց նաև բացառիկ դեպքերում նման հնարավորության հետ կապված ընդհանրական դիտարկում[1]: Համեմտաբար ավելի վաղ ընդունած որոշման մեջ Դատարանն ընդգծել էր, որ որոշ հանգամանքներում սաղմը կարող է օգտվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված պաշտպանությունից[2]:

Հիմնահարցը միջազգային չափորոշիչների և ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի լույսի ներքո դիտարկելու պարագայում՝ հանգում ենք եզրակացության, որ չի նկատվում էբրիոնին որպես արժեք ճանաչելու, իսկ բացառիկ դեպքերում՝ սաղմի՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված պաշտպանությունից օգտվելու հնարավորության բացարձակ հերքում:

Կարծում ենք, որ խնդիրն իրավական կարգավորման դաշտ բերելու առաջին քայլը պետք է համարել սաղմին (էմբրիոնին) իրավական բնորոշում տալը, ինչպես նաև կնոջ՝ հղիության արհեստական ընդհատման (աբորտի) իրավունքի լույսի ներքո այն դիտարկելը: Այստեղ ելակետային պետք է համարել մարդու սաղմի զարգացման փուլերի վերաբերյալ բժշկագիտության դիտարկումները՝[3] հասկանալու համար սաղմի ձևավորման և (կամ) զարգացման ո՞ր փուլից է հնարավոր խոսել նաև բժշկական տեսանկյունից վերջինիս մոտ կյանքի գոյության մասին: Եվրոպական պետությունների մեծ մասում բացակայում են նման կարգավորումները, իսկ այն պետությունները, որոնք օրենսդրորեն լուծել են մարդու սաղմի բնորոշման հետ կապված հարցը (ԳՖՀ, Ավստրիա, Իսպանիա և այլն), տարբեր կերպ են բնորոշում օրգանիզմը[4]: ՀՀ-ն ևս դասվում է այն պետությունների շարքին, որոնց օրենսդրությունը լռում է նշված իրավական կարգավորման կապակցությամբ:

Մասնավորապես, «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի՝ «Օրենքի հիմնական հասկացությունները» վերտառությամբ 2-րդ հոդվածում ընդամենը տրված է դոնորական սաղմի դեֆինիտիվ ձևակերպումը, որը ոչ մի դեպքում չի կարող որոշակիություն մտցնել մեզ հետաքրքրող հարցի մեջ: Օրենքի 10-րդ հոդվածը կանոնակարգում է հղիության արհեստական ընդհատման (աբորտ) հետ կապված հարաբերությունները, որի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր կին ունի հղիության արհեստական ընդհատման (աբորտի) իրավունք: Հղիության արհեստական ընդհատումը (աբորտը) (այսուհետ՝ ընդհատում)՝

1) մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է կնոջ գրավոր դիմումի համաձայն: Բժշկական ցուցումների դեպքում ընդհատումը մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը իրականացվում է կնոջ գրավոր համաձայնությամբ.

2) 12-ից մինչև 22 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է բացառապես բժշկական (ներառյալ՝ սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականության դեպքում) կամ սոցիալական ցուցումների առկայության դեպքում՝ կնոջ գրավոր համաձայնությամբ: Հատկանշական է, որ բժշկի կողմից բժշկական կամ սոցիալական ցուցումների՝ 10-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված կարգով ընդունված ցանկում չնախատեսված որևէ այլ դեպքում, ներառյալ՝ ***սեռով պայմանավորված 12-ից մինչև 22 շաբաթական ընդհատումն արգելվում է:***

---

[1] European Court of Human Rights. X. v. United Kingdom. Application N 8416/79. Տե՛ս նաև՝ **Grégor Puppinck,** Abortion and the European Convention on Human Rights. Irish Journal of Legal Studies, Vol. 3(2) , p. 151-152.

[2] European Court of Human Rights. H. v. Norway. Application N 867/60.

[3] Էմբրիոն՝ մարդու օրգանիզմ զարգացման նախնական փուլից մինչև 7 շաբաթական, սաղմ՝ 8-ից 22 շաբաթ, «երեխա»՝ 22 շաբաթականից մինչև կենդանի ծնվելը՝ սկսված 500 գրամից:

[4] Տե՛ս **Гландин С.В.** О статусе эмбриона человека в свете права на уважение личной и семейной жизни в европейском и российском праве. http://lexandbusiness.ru/view-article.php?id=3743. 13.10. 2016.

*Նորմի փաստակազմի հատկանիշների վերլուծությամբ կարելի ընդգծել, որ օրենքը ճանաչում է կնոջ՝ հղիության արհեստական ընդհատման իրավունքը: Ընդ որում՝ մինչև 12 շաբաթական հղիության պարագայում կինն իր այդ իրավունքից օգտվում է սեփական գրավոր դիմումի հիման վրա: Սակայն այդ նույն ժամկետներում եթե առկա է հղիության հետ կապված բժշկական ցուցում (ինչը կարող է կապված լինել առողջական տարբեր խնդիրների հետ), ապա օրենքի նորմի տրամաբանական մեկնաբանությունից երևում է, որ պահանջվում է նաև հղիությունը ընդհատելու վերաբերյալ կնոջ գրավոր հաստատումը (համաձայնություն): Հղիության ավելի ուշ փուլում, այն է՝ 12-ից 22 շաբաթական հղիության արհեստական ընդհատումն իրավաչափ է համարվում փաստակազմի հետևյալ հատկանիշների առկայության դեպքում՝* **բժշկական կամ սոցիալական ցուցումների առկայություն և կնոջ գրավոր համաձայնություն:** Այսպիսով, իրավաստեղծը վերը նշված փաստական հանգամանքների առկայության դեպքում առնվազն հնարավոր է համարում աբորտը, ինչը ենթադրում է, որ չի ճանաչվում սաղմի՝ զարգացման այդ փուլում կյանքի իրավունքը՝ անուղղակի կերպով հնարավոր համարելով կնոջ կողմից էմբրիոնի *զարգացումը խոչընդոտելը*:

Սակայն այս ամենը չի նշանակում, որ 22 շաբաթական հղիությունից հետո ՀՀ գործող օրենսդրությունը ճանաչում է սաղմի կյանքի իրավունքը: Ժամկետային իմաստով աբորտի թույլատրելիության և արգելքի հետ կապված իրավակարգավորումները նպատակ չունեն որոշակիացնելու սաղմի կյանքի սկզբի հետ կապված խնդիրը: Նշված ժամանակահատվածից հետո հղիության արհեստական ընդհատման արգելքն օրենսդրությունը կապում է կնոջ առողջության և կյանքի պաշտպանության նպատակների հետ[1]: Դրա մասին են փաստում հետևյալ օրենսդրական լուծումները: Հատկանշական է, որ ՀՀ քրական օրենսգիրքը «ապօրինի աբորտ կատարելու» հանցակազմը նախատեսել է «*Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունները*» գլխում, որի սահմաններում պաշտպանվող անմիջական օբյեկտը մոր կյանքը և առողջությունն է: Ավելին, հղիության արհեստական ընդատման հնարավորության դեպքերում օրենսդիրը դրա հնարավորությունը կապում է ծնողներից միայն մոր գրավոր համաձայնության հետ, ինչը նշանակում է, որ անուղղակի ձևով այս պարագայում ևս կարևորվում է ոչ թե սաղմի կենսաբանական և իրավական վիճակը, այլ մոր: Ավելորդ չէ նշել, որ չնայած այն հանգամանքին, որ սաղմի ֆիզիկապես կրողը մայրն է, ամեն դեպքում ապագա երեխայի հայրը ևս պետք է ունենա իրավաբանական հնարավորություն միջամտելու հղիության արհեստական ընդհատմանը: Հօգուտ բերված փաստարկների է խոսում նաև ՀՀ օրենսդրական այն լուծումը, համաձայն որի՝ «բազմապտուղ (3 և ավելի) հղիություն դեպքում հղիի դիմումի և իրազեկված գրավոր համաձայնությամբ *կատարվում է զարգացող սաղմերի/պտուղների կրճատում* (ռեդուկցիա) վիրահատական միջամտության միջոցով՝ *կնոջ կողմից նշված քանակին համապատասխան,* սակայն ոչ ավելի քան 3 սաղմ/պտուղ»[2]: Նման իրավական կարգավորումները համահունչ չեն մարդու կյանքի սկզբի վերաբերյալ բացարձակ տեսությանը:

---

[1] Առանց հղի կնոջ համաձայնության, բժշկական հանձնաժողովի որոշմամբ, դրա անհնարինության դեպքում՝ բժշկի որոշմամբ, թույլատրվում է իրականացնել բժշկական միջամտություն հղի կնոջ կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Տե՛ս «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի հոդված 6, մաս 4:

[2] Տե՛ս «Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 7 մարտի 2013 թվականի թիվ 214-ն որոշմամբ հաստատված «Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգի ու բժշկական գործելակերպի» կետ 51:

Կյանքի սկզբի որոշակիացման վերաբերյալ կատարված վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ անընդունել են լիբերալ մոտեցման կողմնակիցների դիտարկումները, որոնք կյանքի սկիզբը կապում են բացառապես ծնվելու փաստի հետ: Ցավոք այս մոտեցումն է դրված առանձին պետությունների, այդ թվում ՀՀ օրենսդրության հիմքում: Բացարձակ մոտեցումն ընդունելու դեպքում ամբողջությամբ ենթական է վերանայման հղիության արհեստական ընդհատման ինստիտուտը: Սակայն այս պարագայում կարող ենք էական խնդիրներ ունենալ ապագա մոր արժանապատվության և մայրանալու իրավունքների հետ: Մասնավորապես, խնդիրը կարող է կապված լինել անցանկալի (օրինակ՝ բռնաբարության հետևանքով հղիանալու դեպքերին) հղիությունների կամ մոր կյանքին և առողջությանը վնաս հասցնելու դեպքերի հետ: Բացարձակ տեսությունը չընդունող որոշ գիտնականներ իրենց մոտեցումը պնդում են նաև այն փաստարկով, որ հնարավոր են իրավիճակներ, երբ կնոջ օրգանիզմում զարգանում է ոչ թե մեկ պտուղ, այլ երկու և ավելի, իսկ բժշկագիտության տեսանկյունից դա հնարավոր չէ պարզել բեղմնավորումից անմիջապես հետո[1]: Այս պարագայում հեղինակների նշված խմբի մոտ հարց է առաջանում՝ ապօրինի աբորտի դեպքում անձը կենթարկվի պատասխանատվության մե՞կ, թե՞ երկու և ավելի անձանց սպանության համար, եթե օրենսդրությամբ կյանքի իրավունքի սկիզբ համարենք սաղմնավորման պահը: Օրենսդրությամբ կյանքի սկիզբը սաղմնավորման պահը համարելու պարագայում, կարծում ենք, նշված դեպքում չի կարող առաջանալ և ոչ մի խնդիր: Եթե նույնիսկ բժշկագիտությունը հնարավորություն չունի սաղմնավորման պահից պարզելու՝ կնոջ օրգանիզմում ձևավորվելու է մեկ, երկու և ավելի պտուղ, հետևաբար այն փուլում, երբ դա հնարավոր չէ պարզել, անձը կենթարկվի պատասխանատվության կոնկրետ հետևանքի համար:

Անհրաժեշտ է նշել, որ պետություններում նկատվում է բացարձակ կամ փոխզիջումային մոտեցումների հիման վրա հիմնահարցի իրավական կարգավորմանն անցում կատարելու միտում: Այսպես, Իռլանդիայի, Սլովակիայի, Չեխիայի, ԳԴՀ-ի սահմանադրությունները երաշխավորում են մարդու կյանքի իրավունքի պաշտպանությունը մինչև ծնվելը[2]: Իսկ ԳԴՀ Սահմանադրական դատարանը հիմնահարցի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումներում հնարավոր է համարել բացառիկ դեպքերում հղիության արհեստական ընդհատման հնարավորությունն օրենսդրությամբ կարգավորելու հարցը[3]: Առանձին պետություններում (Ֆրանսիա, Ավստրալիա) խնդրի վերաբերյալ իրավական կարգավորումներ են առկա սովորական օրենքների մակարդակով[4]: Իսկ ահա ԱՄՆ-ի Գերագույն դատարանի իր որոշումներից մեկում ընդգծում է, որ պետությունը հետաքրքրված է սաղմի կենսունակության[5] հարցի պարզմամբ, քանզի սաղմը կենսունակ է նաև մոր օրգանիզմից դուրս[6]:

Վերապահումով ընդունելով բացարձակ մոտեցման կողմնակիցների տեսակետները՝ կարծում ենք, որ և՛ Սահմանադրությամբ, և՛ մասնավորապես ոլորտը կարգավորող համապատասխան օրենսդրությամբ անհրաժեշտ է նշել այն դեպքերը, երբ հղիության արհեստական ընդհատումը կդիտվի արդարացված միջամ-

---

[1] Տե՛ս **Шиндяпин С. Э.** К вопросу о моменте признания правоспособности эмбриона человека. Вестник ТГУ, выпуск 12 (140), 2014, с. 3.

[2] Տե՛ս Конституции государств Европы в 3 т. Т. 1. М., 2001. С. 115-121, 752.

[3] Сборник решений Федерального Конституционного Суда ФРГ-39,1; 88, 203.

[4] Տե՛ս **Сэнт-Роз Ж.** Право и жизнь // Вестник Моск. ун-та. Сер. 11. Право. 2003. N 6. С. 57. **Mason & McCall Smith** Law and Medical Ethics. Butterworths. London, Edinburg, Dublin, 1999. P. 126

[5] Մանրամասն տե՛ս Engelhardt 1983 Viability and the use of felus. In. Bonoleson WB et al (eds) Abortion and the status of the fetus. Rudel, Dordrecht, p. 196.

[6] Տե՛ս **Walters L** 1983 The fetus in ethical and public policy discussion from 1973 to the present. In: Bondeson WB et al (eds) Abortion and the status of the fetus. Rudel, Dordrecht. P. 16.

տություն սաղմի կյանքի իրավունքին: Կարծում ենք, որ նման միջամտությունն արդարացված է բացառապես 2 դեպքերում՝

- ***ոչ ցանկալի հղիության պարագայում***[1], սակայն արհեստական ընդհատման համար ժամանակային իմաստով հստակ սահմանափակելով կնոջ հայեցողությունը (առավելագույնը 1 շաբաթ),
- ***կնոջ կյանքին իրական սպառնալիքի դեպքում*** (առանց ժամկետային սահմանափակման):

Կատարված վերլուծությունների հիման վրա առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության «Կյանքի իրավունք» վերտառությամբ 24-րդ հոդվածը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք, այդ թվում՝ մինչև ծնվելը:
2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:
3. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:
4. Սույն հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքին ապօրինի միջամտություն չեն համարվում հղիության արհեստական ընդհատման՝ օրենքով նախատեսված բացառիկ դեպքերը:

# ПРАВОВОЙ СТАТУС ЧЕЛОВЕЧЕСКОГО ЭМБРИОНА В СВЕТЕ ОСНОВНОГО ПРАВА НА ЖИЗНЬ

**Манук Мурадян**
*начальник юридического факультета*
*Академии образовательного комплекса полиции РА,*
*кандидат юридических наук, доцент*

Статья посвящена изучению проблемы права на жизнь эбриона в свете основного права на жизнь. В статье особо подчеркивается важность конституционной защиты такого права. Для системного освещения проблемы в данной работе проанализированы основные теории определения начала жизни человека. В статье также изучены международные документы, касающиеся данной проблемы, и на примере ряда прецедентных решений ЕСПЧ и судебных органов отдельных государств рассматривается вопрос о современных подходах права к регулированию статуса эмбриона человека. В статье предложено закрепить право эбриона на жизнь на конституционном уровне, регулируя также механизм вмешательства в предмет защиты исследуемого права, предусмотренный законом в особых случаях.

[1] Հղիությունը որպես բռնաբարության, ինցեստի հետևանք:

# THE STATUS OF THE HUMAN EMBRYO IN THE LIGHT OF THE FUNDAMENTAL RIGHT TO LIFE

**Manuk Muradyan**
*Dean of faculty of law of the Academy*
*of police educational complex of the RA,*
*Candidate of Legal Sciences, Associate Professor*

This article is aimed at discussing the issues of the right to life of embryo in the light of the fundamental right to life. Specifically, the article emphasizes the importance of the constitutional protection of this right. In order to cover systematically the above mentioned problem the basic theory of determining the beginning of human life is analyzed in this article. Meanwhile, international instruments related to this issue are discussed, as well as based on the example of a number of precedent decisions of the ECHR and judicial authorities of various states, the issue of current approaches to the regulation of the status of the human embryo is considered in this article. The article prompted to confirm the right to life of embryo at the constitutional level by adjusting the mechanism of intervention to protect the above mentioned right, in specific cases provided by the law.

**Բանալի բառեր** – *էմբրիոն, կյանքի իրավունք, հղիության արհեստական ընդհատում, միջազգային չափորոշիչներ, նախադեպային իրավունք*
**Ключевые слова:** *эмбрион, право на жизнь, аборт, международные критерии, прецедентное право*
**Key words:** *the embryo, the right to life, abortion, international criteria, the case-law*